

ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ԵՅՈՎԱԴԱՐՈՒՄ

Եթովպիո հայերը, նման Եգիպտոսի իրենց ազգակիցներին, պատրաստվում են Սովետական Հայաստան ներգաղթել: Եթովպիո հայկական գաղութը հաշվում է մոտ 1000 անդամ, որոնց 800-ը Ատիս-Աբեբայի և մնացյալը Տիրե-Տաուայի մեջ են: Ըստ գնացի տեսնելու Հովհաննես քահանա Կեովհերյանը՝ Ատիս-Աբեբայի հայկական Ս. Գևորգ եկեղեցվոց երեցը: Քահանան ինծի հայտնեց, թե իր նախագահությանը կազմված մի կոմիտե սկսել է արձանագրությունը հայերի, որոնք ուզում են թողնել երկիրը, գնալու համար Սովետական Հայաստան: Մինչ այժմ արձանագրվածների թիվը հասնում է 185-ի և նա կարծում է, թե այդ թիվը պիտի բարձրանա 300-ի: Արձանագրությունների թուղթերը Գահիրե պիտի ղրկվեն և Գահիրե-

ից է, որ պիտի գան հրահանգները արձանագրված անձերի ներգաղթի պայմանների մասին: Ըստ Կեովհերյան քահանայի, արձանագրվածները Եգիպտոս պիտի ղրկվեն և եգիպտական նախահանգստից է, որ նրանք պիտի գնան Հայաստան:

Եթովպիո հայերը Ատիս-Աբեբայի եկեղեցիից բացի ունեն նաև մի դպրոց, ուր հաճախում են մոտ 120 աշակերտներ: Այնտեղ ուսուցվում է հայերեն, ամհարերեն, ֆրանսերեն, անգլերեն: Տիրե-Տաուայի մեջ նրանք ունեն եկեղեցի, ուր քահանայադոկտոր է Ատիս-Աբեբայի եկեղեցվոց երեցը: Նա ամիսը մեկ երկու անգամ այնտեղ է գնում, պատարագ մատուցանելու և իր հոտի հոգեկոր պետքերը հոգալու համար:

«ՆՊՐԱՄ»

ՆԿԱՐԻՋ ՍԱՐԳԻՍ ԽԱՋԱՏՐՅԱՆ

Փետրվարի ցուրտ ու տխրամած օր մը այցելեցի, մոտ ամիս մը առաջ, Չերնուշի թանգարանը, որ կգտնվի Մոսկոյի թաղային պարտեզին մոտքին վրա: Այս թանգարանը հատկացված է Մայրագույն Արևելքի երկիրներու արվեստի գործերուն: Անոր տնօրենն է Պ. Բրեն Կրունե, խաչակիրներու պատմագիրը, որ պատրաստած է երկու հատոր հայոց պատմություն մըն ալ, շուտով հրատարակելու: Այս թանգարանին մեջ ցուցադրված են այժմ նկարիչ Սարգիս Խաչատուրյանի Հնդկաստանին բերած որմանկարներու հավաքածուն: Այս որմանկարները ընդօրինակված են Պոմպեի և Սեյլանի հնդդիկ վիմափոր տաճարներուն մեջ, չորս տարվան երկարաշունչ ու դժվարին աշխատանքներով: Արվեստագետը ընդօրինակող մը չէ եղած միայն, այլ վերարտադրող մը, այդ նկարներեն շատերը դարերու ընթացքին եղծված ըլլալուն:

Թանգարանին պահապանին տվի անունս, խնդրելով որ իմաց տա նկարիչին: Ս. Խաչատուրյան փութաց իջնել տնօրենության գրասենյակեն ուր կգտնվեր այդ պահուն: Ողջագուրվեցանք, ինչպես վաղել է հին ծանոթներու և բարեկամներու: Զինք չէի տեսած մոտ 12 տարի ե լի: Վերջին անգամ հանդիպած էինք իրարու Գահիրե, ուր եկած էր ցուցադրելու Իրանին իր բերած որմանկարներու հարուստ ու թանկարժեք հավաքածուն: Այս անգամ զինք գտա հոգնած ու տոբուլ: Նիհարած էր ու ծերացած: Փարիզ հասնելուն հիվանդացած էր և կտրուորնջար ցուրտեն: Փարիզի ցուրտեն, որ

կթափանցե ոսկորներուդ և կշլատե աշխատելու կորովը, երբ մանավանդ ածուխ ու փայտ կպակսին տուներու և հանրային շենքերու մեջ, ինչպես է թանգարանը:

Հակառակ իր հիվանդագին վիճակին, հաճոյակատարությամբ ընկերացավ ինձ թանգարանին սրահներուն մեջ: Կանգ առինք յուրաքանչյուր որմանկարի առջև: Բացատրեց երկար զանոնք, ոմանք փոքր, ուրիշներ մեծադիր: Ահա Պուտոլայի ծննդյան առասպելը, Պոթհիսաթվան, առասպելական ուրիշ դեմք մը, դիմանկարներ, բրնձեղանի խորքին վրա երևացող կենդանիներ, կիններ մանավանդ՝ նվաղուն նայվածքներով և հուռթի, բաց կտրծքերով: Հաճախ այս բոլորն իրարու խառնված, զիրար լրացուցած զարմանալի ամբողջություն մը կազմելով: Խաչատուրյան հինգերորդ և վեցերորդ դարերու խորքին դուրս բերած էր զեղարվեստական գանձ մը, անծանոթ նույնիսկ հնդիկներուն:

Երբ իրարմ բաժնվեցանք, խոստանալով որ նկարահանողս վերջանալեն հետո զիրար գտնենք ընտանեկան սեղանի մը շուրջ, չէի կրնար ենթադրել, որ վերջին անգամ կսեղմեի իր ձեռքը: Զէի դիտեր նաև որ բավական տարիներն ի վեր կտառապեր աղեթափութեն: Պետք է զգացեր վիրաբուժական գործողություն մը կատարել տալու: Եվ հիվանդանոցի մը անկյունը, հեռու իր սիրելիներեն մնացած է դանակին տակ: Հուղարկավորության մը առթիվ իմացա սև լուրը: Երեկ կատարվեցավ իր հուղարկավորությունն ալ, Ժան-Կուստինի

հայոց եկեղեցիներ, որ ընտանիքի քանի մը անդամներ և բազմաթիվ բարեկամներ, գերական-գեղարվեստական շրջանակե, փութացած էին իր հիշատակին մատուցանելու արժանավոր հարկ մը: Կնախագահեր Կաթողիկոսական պատվիրակ Արտավազդ Արքեպիսկոպոս, որ խոսնցավ օրվան և հանգուցյալին արժանիքին պատշաճ քարոզ մը: Խոսք առին նաև Պ. Վ. Յարճանյան, ողբալու համար իր բարեկամը և Պ. Ռ. Շիշմանյան՝ հանուն «Անի» Գեղարվեստական Միության, որուն հիմնադիրներն եղավ 1927-ին հանգուցյալը Պ. Փուշմանի և դամբանախոսին, ինչպես և ուրիշ արվեստակիցներու հետ: Պ. Շիշմանյան տվավ ողբացյալին կենսագրական գծերը և իր արվեստագետ կատարած գործին դաս-հատուկությունն ըրավ:

Սարգիս Խաչատուրյան ծնած էր Մալաթիա, 1886-ին: Աշակերտած էր Սանասարյան վարժարանին, որուն խնամակալությունը իր արվեստագետի ընդունակությունը տեսնելով, դրկած էր դալն Եվրոպա, կատարելագործվելու համար: Գացած էր նախ Իտալիա, հետո Զվիցերիա, ու պահ մը հետևած էր մանկավարժության ալ, Սանասարյանի մեջ ուսուցչական պաշտոն մը ստանձնելու հանձնառու եղած ըլլալով: Հետո այցելած Պերլին, Վիեննա, Փարիզ: 1914-ի պատերազմի նախօրյակին, Էրբ ուսուցիչ էր Սանասարյանի, եկած էր Պոլիս, ուրկե կըրցած էր Կովկաս անցնիլ, երբ պատերազմը պայթած էր: Մալաթիո գեղեցիկ բնությունը անպայման իր մեջ զարգացուցած էր արվեստագետի հակումը: Եվրոպան զինք հաստնցուցած էր: Կովկասը իր վրձինին հայթայթեց առաջին նկարներու թերշնչումը, Հայաստանի բնությունը, գաղթականությունը, հայ ժողովրդին տառապանքը նոր ու առատ նյութեր հայթայթած էին իր դիտող աչքերուն և ճիշտ երանգապնակին: Նկարներու հարուստ հավաքածուով մըն էր, որ վերադարձավ Պոլիս 1919-ին, երբ զինք ճանչցա առաջին անգամ:

Այն ատեն խմբագիրն էի «Ժողովուրդի Ձայն»-ին: Խաչատուրյան իր նկարները դրած էր Բերիայի Ազգային Մատենադարանը: Անոնց մեջ կային Սեանը, Արարատը, հայ գաղթական կիներ, գաղթականներու հետիոտն ու թշվառ կարավանները, Կովկասի հանքային ջրերու կայանները (ինչպես էսենտուկին) և այլ վայրեր ներկայացնող տեսարաններ, հորդ ու պայծառ գունավորումով մը, որ դասական արվեստեն կհեռացներ զինք, նոր որոնումներու

ձամբուն վրա: Նվիրեցի իր գործերուն հողված մը, որ բավական աղմուկ հանեց Պոլսո մամուլին մեջ: Ուրիշներ, ինչպես Չիֆթի Սարաֆ, Խաչատուրյանի մեջ կտեսնեին պոետո գույներով ուշադրություն հրավիրելու զոր ուժը: համբալ մը, որ ամբի առնտրական էր քան նկարիչ: Իր ցուցահանդեսը, կազմակերպված կարծեմ Պոլսո Հայ Կանանց Միության կողմե, հաջողություն մը եղավ իրեն համար: Խաչատուրյանը հանրության ներկայացնելու չէի զղջացած: Խաչատուրյան ինքն ալ կարծես փոխադարձելու համար իր արվեստին մասին ունեցած գնահատանքս, օր մը անակնկալ մը ըրով ինձ: Դարձյալ «Ժողովուրդի Ձայն»-ին մեջ կհրատարակեի այդ օրերուն, Դրվազներ Հայ Ծարագրության Կյանք, ինձ պատմված ակամատեսներե: Դրած էի, այդ կարգին ըլլալով, «Անապատի դասը» խորագրով զրմագ մը, որ կպատմվեր թե ինչպես հայ շափահաս տղեկ մը, անապատի ավաղներու վրա դավազան մը ձեռքին այրուքներ կդրեր ուրիշ հայ տղոց հայերեն սորվեցնելու համար: Խաչատուրյան նկարած էր այդ դժբաղդ, և օր մը, երբ այցելած էի իրեն, պատուաբ բացավ աչքիս առջև: Չեմ գիտեր ո՞վ գնեց հետո այդ նկարը: Անկե լուսանկար մը ունիմ միայն: Խաչատուրյանի այս շրջանին պատկանող նկարներեն մեկ քանին կմնան այժմ Հայաստանի նկարչական թանգարանին մեջ:

Խաչատուրյան երկար ատեն շմնաց Պոլիս: Հաջիվ ժամանակ ունեցավ, շողմնավր առնելի առաջ, պսակվելու օր: Սարյանի հետ, այժմ տիկին Վալա Խաչատուրյան: Պ. Գ. Նորատունկյան, Սանասարյան խնամակալության ատենապետն էր և մոտեն կհետաքրքրվեր իրմով: Անոք օժանդակություն կամ քաջալերանքով մեկնեցավ Փարիզ, ուր պիտի գտնեի զինք քանի մը տարի հետո: Ու պիտի վայելի կրկին իր բարեկամությունը, սրտաբաց և անվերապահ:

Փարիզի միջավայրը Խաչատուրյանը առաջնորդեց նոր որոնումներու: Նկարիչ Փուշման եկած էր Փարիզ և եթե չեմ սխալի, պահ մը միեկնույն աշխատանքին մեջ մնացին: Փուշմանի արվեստը զինք մղեց հետաքրքրության զեպի հեռավոր Արևելքի արվեստը: Միաժամանակ Խաչատուրյան փորձեց կուաշը, ջրաներկը, գծեց խորհրդապաշտական նկարներ, ուր իրերը և ծաղիկները (եզու կանոն և կյանք): Անխոն աշխատող մըն էր: Շատ կարտադրեր: Այս առատ արդյունագործությունը ոմանց աչքին կվնասեր որակին, սակայն յուրաքանչյուր

նկար նոր հանգրվան մըն էր հաշատուրյանի համար:

Օր մըն ալ՝ հաշատուրյան հանգյտացավ Փարիզէն: Գացեր էր Իրան, Շահ Ապասի շրջանի որմանկարները փնտռելու համար Սպահանի մեջ: Արեւելքը կառնքներ զինք իր առատ լույսով, իր բուսերով, իր խորհուրդներով: Չբավականացավ վերարտադրելով հնամուտը պալատներու որմանկարները, գնաց ամփոփվիլ Նոր Զուլայի հայոց պատմական եկեղեցիին զմբեթին ստվերներուն տակ: Վերադարձավ նոր հմայքով մը և նոր պաշարով: Փարիզի մեջ ցուցադրելի հետո իր հավաքածոն, անցավ Լոնտոն, հերոս ուրիշ մայրաքաղաքներ: Նվրոպայէն Կիւրիկէ: Գահիրեի մեջ կրկին հանդիպեցաւ իրեն, եթէ չեմ սխալիր 1934-ին: Տիրբան փաշա տ'Ապրոյի պալատին մեջ, որ նկարչական թանգարանի վերածված է, Գահիրեի պարսից դեսպանին հովանավորութեամբ ցուցադրվեցան իր իրանյան որմանկարները, մեծ հետաքրքրութիւն արթնցնելով գեղարվեստական բազմացեղ հասարակութեան մեջ: Գահիրեն հետո եկար տարիներ կորսնցուցի հետքը: Ամերիկա անցած էր, ուրկէ երբեմն կուգային իր լուրերը, ցուցահանդես ցուցահանդես: Փարիզի մեջ վերջին հանդիպումս իրեն հետ, զիս պիտի դներ նոր հայտնութեան մը առջև, Հնդկաստանի որմանկարները դիտելով:

Ի՞նչ պիտի ապրի իրմե: Նկարիչներու գործը գրողներու նման հատորներու մեջ

«ԼՐԱՔԵՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

Մեռավ Սարգիս հաշատուրյանը: Մեռավ վրձինի և գույներու ինքնատիպ վարպետը: Սարգիս հաշատուրյանի մահը ազգային մեծ կորուստ է: Ամբողջ ազգն այսօր կսգա իր մեծատաղանդ որդւոյն մահը: Բոլոր երկիրներու գեղարվեստական շրջանակները կողքան անժամանակ և անակնկալ կորուստը անվանի վարպետին, որուն վրձինն և երանգապնակն տակավին շատ մեծարժեք գործեր կսպասեն: Կողքան անոր կորուստը մանավանդ Իրանն ու Հնդկաստանը, որոնց հնադարյան արվեստը փրկեց կորստեմ, վերաթմբաւորեց զանոնք իր ստեղծագործական տաղանդով և ծանոթացուց ամբողջ աշխարհին:

Ոչ մեկ ուրիշ արվեստագետ իրմե առաջ Հնդկի բազմաշարար ժողովրդի ազատագրութեան այնպէս չէր սատարած, ինչպէս ծառայեց հաշատուրյանը, դժվարին և բազմատանջ աշխատանքով, պաստառի վրա վերարտադրելով Հնդկաստանի սրբազան քաղաքներու որմանկարները:

Համփոփվիր: Ան կցրվի ի սփյուռս աշխարհի: Հաճախ նկարիչին ստորագրութիւնն ալ կկորսվի պաստառի վրա, ժամանակին հետ: հաշատուրյան Փարիզի մեջ հրատարակած էր ալպոմ մը իր հարգ մը նկարներուն լուսանկարներով: Բայց լուսանկարը այն է նկարին համար, ինչ որ է շուքը մարդուն համար: Մասնագետներու կարծիքով որմանկարներու ընդօրինակումը կամ վերարտադրութիւնը չի բավեր իրեն համարվել հավերժացնելու, քանի որ անոնք ստեղծագործութիւններ չեն: Բուն ստեղծագործութիւնը հոգիի ժայթքն է, անցնելով երանգապնակէն: հաշատուրյանի բազմաթիւ նկարներուն մեջ կան որ պիտի մնան իբրեւ արվեստի տեական գործ: Որմանկարներու ընդօրինակումը կամ վերարտադրութիւնը սպառիչ գործ է, և հաշատուրյանի պարագային կերպով մըն ալ սպանիլ եղավ: Ավելի երջանիկ պիտի ըլլար ան, եթէ վերարտադրած ըլլար Հայաստանի և հայ ժողովրդին նոր կյանքը, երկրին թուլեցները հավերժացուցած պաստառին վրա, բայց արվեստագետները կնաման թշուաններու: Անոնք իրենց երազը կհետապնդեն բոլոր հորիզոններուն տակ: Ու երբ հասնի վերջալուստը, կիշնան ունէ հողի վրա, նետահար թռչունի մը պէս:

ԶՈՎԶ. ՊՈՂՈՍՅԱՆ

3 մարտի, 1947 թ., Փարիզ
(«Պայքար» թիվ 1623)

Ոչ մեկ ուրիշ արվեստագետ իրմե առաջ այդ նկարները չէր վերարտադրած այնքան հարազատութեամբ, ինչպէս հայ վարպետ, վերարտադրեց, դրոշմելով անոնց վրա անշնչելի ստեղծագործական կնիքը:

Սարգիս հաշատուրյանը ամենէն առաջ հայ արվեստագետ էր, որու նկարները ընդհանրապէս հագեցված են հայրենասիրութեամբ և որոնց նյութերն առնված են հայրենի երկրեն և Մեծ Նդեռնի շրջանին Հայ ժողովրդի կրած տառապանքներէն:

Նկարներու այն շարքը, որ կներկայացնէ Երևան և էջմիածին ապաստանած Հայ գաղթականներու սրտաճմլիկ տառապանքը, կոչված է հանդիսանալ մեր ազգային մեծ ողբերգութեան հավերժական հուշարձանը: Մեր գրականութեան ու երաժշտութեան մեջ տակավին չէ արտադրված Մեծ Նդեռնի նվիրված նույնարժեք երկ մը: Ինչ որ զգիւիչ է և հոյակապ նկարներու այդ շարքի մեջ, տառապող կանանց, այրերու և

հերխաներու նվազած նախաժողովներու մեջ անգամ դժվար չէ նշմարել Հայ ժողովրդի վերապրելու հույսը:

Սարգիս հաշատրյանը շատ լավ ըմբռնած էր իր ժողովրդի ոգին և կհավատար անոր ապագային: Եվ վարպետը չէր սխալած:

Սարգիս հաշատրյանը որքան մեծ արվեստագետ էր, նույնքան մեծ քաղաքացին էր իր ժողովրդին: Ան առաջին օրն սիրով և գուրգուրանքով ողջունեց Սովետական կարգերու հաստատումը Հայաստանի մեջ, Հովհաննես Թումանյանի և Մարտիրոս Սարյանի հետ: Պատերազմի ամբողջ տևողությամբ Սարգիս հաշատրյանն ու իր շնորհալի տիկինն այնտեղ էին, ուր որ գործ կար քաջամարտիկ կարմիր Բանակին և Սովետական Հայաստանին օգնելու: Հաճախ վարպետը Սովետական Հայաստանի տարեդարձը ողջունած է մեր թերթի սյունակներին բանաստեղծական խանդավառ խոսքերով:

Նույնքան եռանդով Սարգիս հաշատրյանը իր մասնակցությունը բերավ Թրքահայ հոդերը Սովետական Հայաստանին կցելու:

ազգային պահանջին: Քարենկի Հողի մեծ միթինկին մեջ Սարգիս հաշատրյանը մեկն էր բեմի վրա նստած ականավոր անձնավորություններին:

Այնուհետև ան լիաբուռն եռանդով կազմակերպեց Սովետական Հայաստանի 25 տարվա նվաճումներուն նվիրված լուսանկարային ցուցահանդեսը Քարենկի Հողին մեջ: Սթյուտիո, վրձին, երանգապակի և ամեն ինչ մոռցած, ինքզինքը նվիրած էր այդ ցուցահանդեսին, որպեսզի տասնյակ հազարավոր ամերիկացիներ տեսնեն: Թե ինչպես Սովետական Իշխանության տակ, ընդամենը քառորդ դարու ընթացքին, սովահար Հայաստանը դարձավ երկիր խնդության:

Կհարգենք մեծ վարպետի, քաղաքացիի և հայրենասերի հավետ ամոռանալի հիշատակը, և կուխտենք կորստե փրկել և հավերժացնել անոր ստեղծագործությունները, ամփոփելով զանոնք Երևանի Պետական Թանգարանի մեջ:

(«Լրաբեր» թիվ 100)



Պերճ Ա. հաշատրյանը «Լրաբեր» թերթում ղեկավարած «Վարպետի մահը» խորագրով հոդվածի մեջ գրում է.—

«Մնավ ի Հայոց Աշխարհ,—Հռոմ, Փարիզ Դյունիս կատարելագործեց յուր արվեստը, բայց վրձինը առաջին հերթին նվիրեց իր ազգին. «Արմենիա Ալպոմ»-ը կարևորագույն գործերուն հավաքածուն է, որ ունի ազդագրական և պատմական խոշոր նշանակություն Հայ գեղարվեստի և պատմության համար:

Անցավ Օմար հայամի և Թագորի աշխարհներով. Շահ Ալլաօի Սպահանի պալատներու ավերակները, Հնդկական հին հին դարու անմատչելի մեհյանները իր մենաստանները եղան տարիներով...

Լեգեոնականության, Ասպետության և պատվակալ քաղաքացիության նման աստիճաններ և տիտղոսներ շռայլվեցան իրեն, ուր որ այցելեց:

Իր վերջին հսկա գործը եղավ Օմար հայամի քառյակներու նկարագծումը:

Մինչ Պարսկական արվեստի վարպետներ մեծ խանդավառությամբ կգտվեին իր վրձինի շնորհքը, նրբությունը, ճոխությունը հարազատ երանգավորումը... Ան Արարատի մեկ նոր էքզուսիտով զբաղած էր և Սթյուտիոյն պատերը հայրենի բնաշխարհին առ-

նված նկարներով զարդարած...

Հայրենիքի վառ իրականությամբ խանդավառված, լավագույն օրերու հեռանկարներով լեցված, մանուկի մը նման կխայտար իր հոգին:

Իրեն համար Երևանի մայթերու վրա էլեկտրական լապտերի մի սյունը ավելի նշանակություն ուներ, քան էյֆելի աշտարակը...

Ֆրանսական կառավարությունը հրավիրեց զինքը, պատերազմի պատճառով հետաձգված Հնդկական որմանկարները ցուցադրելու համար ի Փարիզ:

Սա իր կյանքի ամենաերջանիկ պահերն էին էր. բայց ամենաերջանիկը իր բարեկամներու մաղթանքներն էին, որ հաջորդ հրավերը զար Երևանեն: Անահատան ուրախության ցուցումը ղեմքին վրա— «Արդեն հրավիրված եմ սիրելիս: Մենք բոլորս ալ հրավիրված ենք, Հայրենադարձ է սա, չէ» հարց կուտար շուրջիններուն:

Ավա՞ղ, որ կանխահաս մահը արգելք եղավ իր գերագույն տենչանքի իրականացման— իր գործերը, մայրենի հողի վրա, Հայ ժողովրդին ցուցադրելու բերկրանքը:

Մեր անզուգական վարպետի վերջին փափաքին ի կատար ածումը— իր գործերու

միատեղումը երևանի պետական թանգարանին մեջ — միայն կարող են հավերժացնել անոր անբաժան հիշատակը և հրճվեցնել

իր ազնիվ հոգին. որ կհախեր մեր վերև: Եվ այդ կըլլա անսահման վշտերու միակ սիրտիանքը:

Հայ ժողովրդի տաղանդավոր զավակ Սարգիս Խաչատրյանի քողած արժեքավոր գործերը ժառանգությունն են կազմում ողջ հայ ժողովրդի և որպես այդպիսին պետք է մաս կազմեն հայ արվեստի ոսկե ֆոնդի: Եվրոպայի ու Ամերիկայի քեմերի Առաջնորդների և փառիզահայ ու ամերիկահայ առաջադեմ կազմակերպությունների պար-

տականությունն է հավաքել անվանի նկարիչ Ս. Խաչատրյանի եվրոպայում ու Ամերիկայում ավելի քան բարձրարվեստ գործերը և կենտրոնացնել այդպիսիք Սովետական Հայաստանում: Այսպիսով մենք կառարարում կլինենք մեծ արվեստագետի՝ իր գործերը հայ ժողովրդի սեփականությունը դարձնելու փափագը:

ԽՍՀՄԿՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկյան «Թայմզ» շաբաթաթերթը դուրստով կխոսի Արամ Խաչատրյանի «Գայիանեն» պալեթի մասին ու կգրեն. —

Խաչատրյանի «Գայիանեն» պալեթ — սլովիթը Նյու-Յորքի «Ֆրիլադմոնիք սենթրնի Օրբեսթը»-ին կողմն նվազում է առաջնորդությանը: Եթե մի քուրդի Այս գործը իր հաճախողի սովորական սովետ հավաքական թյամբ կներկայացնեն սովետ հավաքական ազարակի կյանքը: Հայկական պարերու ուժգին դիմումը այս գեղեցիկ գործը 43-ամյա սովետահայ Արամ Խաչատրյանի հեղինակությունն է և 1942-ին Ստալինյան մրցանակի արժանացած:

«Գայիանեն» երեք սկավառակի վրա առնված է շատ հաջող կերպով:

Հանրահռչակ որմանկարիչ Սարգիս Խաչատրյանի մահը (Բարիզ) սուգի մատնած է ամերիկահայերը: Ամերիկյան թերթերը, ինչպես «Նյու-Յորք Թայմզ» և «Հերալդ Տրիբյուն» հրատարակած են ողբացալիս նկարն ու կենսագրական գիծերը, նշելով թե «Գեղարվեստի աշխարհը կորսնցուց մեծ մը»: Խանության, Ղեգեոնի ասպիտություն, պատվակալ քաղաքացիության տիրոջաներ ունեցող տիեզերահռչակ որմանկարիչին հոգեհանգիստը կատարված է Նյու-Յորքի Ս. Խաչ եկեղեցիին մեջ: Արարողության ներկա գտնված են նաև Սովետական պանատան բարձր պաշտոնատար Լու-

մաթին և տիկինը, Պարսկական դեսպանատան ավագանին, Հնդկական կառավարության ներկայացուցիչ Տոթթ. Քուսայամի և տիկինը՝ ազգային տարազով, ինչպես նաև բազմաթիվ օտար արվեստագետներ, նկարիչներ, բանդակագործներ:

Քարոզած է Տիրայր Արքեպիսկոպոս և նշած արվեստագետի անմահությունը: Ամերիկայի Առաջնորդը անգլերեն թարգմանած է քարոզը: Հանգուցյալ նկարիչին տիկինը՝ Վալա Բարիզ պիտի դա ամուսնուն գործերը ցուցադրելու համար Լոնդոնի մեջ:

Փարիզի մեջ լույս տեսավ հանգուցյալ իրոֆ Ն. Արսենի ֆրանսերեն վերին աստիճանի շահեկան մեկ գործը՝ ԻՍԹՈՒՆՐ Տ՝ԱՐՄԵՆԻ (Հայաստանի պատմությունը) հրատարակությանը Զ. Բ. Ը. Միության Մեկրոնյան հիմնադրամի:

Մեր հմուտ և տաղանդավոր գիտնականներն օր. Միրարդի Տեր-Ներսիսյանի երկասիրած ԱՐՄԵՆԻԱ ԷՆ Տ ՏԶԸ ՊԵՋԱՆԹԻՆ ԷՄԲԱՅՐ (Հայաստան և Բյուզանդական կայսրությունը) անգլերեն գիրքը, հրատարակությունն նույնպես Մեկրոնյան հիմնադրամի, սպառած ըլլալով, երկրորդ տպագրության ձեռնարկվեց և քիչ ատենեն հրատարակ պիտի հանվի Հալիքտ Եյունիվերսիթի փրեսի կողմից:

(«Եվրատ», քիվ 2917)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՆԴՐ-ՀՈՐԴԱՆԱՆԻ ՄԵՋ

«Միութիւն»-ը հաղորդում է. —

Անդր-Հորդանանի հայ գաղութը բաղկացած է մոտավորապես 200 ընտանիքի, որոն 130 ընտանիքը կընակի Ամմանի, 17-ը՝ Քերեքի, 9-ը՝ Ռեսիֆայի, 8-ը՝ Ջար-

բայի, 5-ը՝ Իրպիթի, 5-ը՝ Աճլունի, 5-ը՝ Սալթի մեջ, իսկ մնացյալներն ալ ցրված են երկրին զանազան կողմերը:

Քերեքի գաղութը կազմված է ամբողջու-